հօրաւոն և ընկերացը մերայոց եւս ան-զեկութիւնները տուանց ։ Այլ յուսամք որ յիշեալ նամականիներն արդէն գրուե-լով խոկուեցան, և մանաւանդ զանէ մեր Նուիրակաց մեծանկին մերայոց լուր մի կը տուանք ։

---

Անցեալ շաբթու Իսմայիլէն ժա-ռանգաւորաց աշակերտ մի հասաւ. այն է Գէորգ Փափովիչ, որ բայց ի իւր ան-մկրտական վկայագրէն՝ ունէր այն բժշկին կողմէն եւս վկայական բերած էր հե-տը, զոր Ա. Ընթացս բժշկին կողմէն եւս տրուած վկայաթղթին հետ հա կը հրատարակեմք ի տեղեկութիւն յի-շեալ պատանւոյն ծնողացը ։

Ամենապատիւ Սրբազան Հայր.

Տեղւոյս միջոցաւ ինձ ներկայացեալ ժառանգաւորաց դպրոցի աշակերտա-ցու Իսմայիլի տէր Յարութիւնեան Գէորգ պատանւոյն բժշկականութիւ-նը, և բնութեամբ ջղային զօրութիւ-նը, ամէն մասամբ առողջ ըլլալը կը վկ-այեմ ։

Նուաստ

16 Հոկ 1867 ։ Ա. Պէհլիվանեան

Բժ. Ա. Ըմբայեան Լեռնաքաղաքեան։

Le soussigné, Docteur en médecine, demeurant à Ismail, déclare que le sieur Géorge Popovits, né à Ismail, agé de 16 ans, d'une constitution bonne et d'un tempérament sanguino-bilieux, est vacciné dès son enfance, et exempt de toute maladie. En foi de quoi je lui ai délivré le présent certificat pour servir et valoir ce qui de raison.

Ismail le 13 septembre, 1867.

L.....

---

Տաղ Ներսիսի հայրապետի. ի Սուրբ Նշանն Ա-ստուածային Խաչին.

Զնշանաւ ձայնիւ բերկրանաց
Գովեսցուք զՔահանային շնորհաց.
Երգեսցուք զերգս հրճուանաց
Հայրապետին պանծանաց ։

Որ ի հօրէն ծնունդ բարի
Լուսաւորչին Գրիգորի,
Սանդղնեալ պատուոյ հրաշալի,
Եւ բարունակ ծաղկալի ։

Զոր փոխանակ եդեալ
Համբուրել զպատուհան Յիսուսի,
Խաւար մեղաց աշխարհի
Լուսով բանին հալածի ։

Նշանաւ Յակոբն Իսրայէլ,
Կամ մարգարէն Մովսէս,
Յաղթեաց ըմբռնելով.
Զկեանս աշխարհի սատակեալ ։

Նշանաւ հրեշտակ ի յերկնից,
Մարդոյ փառք ի յերկրի,
Անեղեալ զանձն Յիսուսի
Ըստ Յովհաննու սիրելի ։

Նշանաւ խաւարն հեղձ հայի,
Յարուած Սատանայ բնակելոյ,
Եղեալ լեզու քաղցրախօս
Մեղաւորաց յուսատու ։

Սուրբ հայր դրեալ աղաչեմք,
Որդիք անկեալ պաղատեմք,
Յանձն առաքեալ զեկեանս մեր
Ի փորձութենաց զմեզ փրկել ։

Ի բանակ կարգաց խորհրդով
Զեկեղեցիս սուրբ Հօրով
Ազատեսցես ի գայթից
Եւ յանօրինաց հերձուածոց ։

Ով հովիւս ամբիծս պահպանեա,
Եւ զհօտապետս պահպանեա,
Զխնամս որ մեզ են զուարթ
Արդարութեամբ խրատեսցես ։

Ով ժողովրդեան հովանայն
Կեցեա ի սէր միաբան,
Գործել զբարիս անխափան,
Փառք Աստուծոյ անփոփոխման ։

---

ՊԱՆԴՈՒԽՏ ՄԵՆԱՒՈՐ
Ի ԳԻՇԵՐ ԱՄՊԱՄԱԾ

Ի մէջ ահաւոր գիշեր գառնագին.
Մինչ սաստկագին հովն ընդ անտառին ծածկին.
Փոխարէն յուսահատ հանդէպ յարատեւ,
Զեան ՚ի ծրարէն հեկեկալ՝ անցայ ։ —

digitised by A.R.A.R.@

Մեկնեցայրաք միութիւնք ·
Հարսնեցայր ախտութիւնք ·

Զուրկ 'ի հայրենեաց, մայրական գրկաց ·
Չէ՞ն ինձ բաւ 'ի սոյա յաճախ այս փշտաց · ·
Ընդ անձան աղէտս զրեմ ով Երկինք ·
Եւ զաղաղակեցին բոյր բաղստանաց ·
Մի՛ բաշխեմիք հայրենականաց
Մի՛ անցոյր չեն 'ի բարձանց ·

Ով անդադար արտասուաց աչեր ·
Ուր բաղստանիցք · ո՞ր փշողալ յանդերձ
Թափառիլ կամիք ընդ նոր բարեկութեան ·
Եւ որո՞ց ձեռաց ձերք գոր փոխեան ·
Մի՛ ով Երկինք · մի՛ ա... ·
Մի՛ անդառնալի բաժանմն ·

Բարե՛ Թախծութեան ապաւինաց արտօ
Ո՛չ լսեն երկինք · ոչ երկիր զաղէս
Ահ · հեղձամղձուկ ձայնս ամփոփեալ
Ընդ ձայնից ...ց համբերութեան ·
Ոխերիմք ինձ ...
Փաղչեն մերժեալ ...

Առ իմ արտասուք թորեալցին յաչաց ·
Մինչեւ Արարիչն եկէ առ իս յոյս ·
Մինչեւ Գերագոյն ընդ իս հաշտեցի ·
Այս արտասուք իմ զաղաղակեցի ·
Ցանկամ ինձ որ ցնծութեան
Ծագի արփի խնդութեան ·

Կ · Ց · Ե ·

---

## ԺՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Քաղաքիս հասարակաց Վսեմ. Նազիֆ փաշայն եկած օրէն ի վեր կ'աշխատի միշտ բարեկարգութեան շաւղին մէջ մտցնել այն զեղծմունքները, որ սպրդած մնացած են՝ ինչպէս ամէն տեղ, նոյնպէս և քաղաքիս մէջ նախորդ կառավարութեանց անհոգութենէն ։ Առաջին գործն է փողոցաց և շուկայից մաքրութեանը հսկել · երկրորդ՝ զինուորականաց իւր ուշադրութիւնը դրուած է, ռամիկներոց և արիշ արուեստի վաճառաց գնահատութիւնը (նարխը), որոյ համար յառաջ յանձնաժողով մի կազմեց մէկ մէկ արհեստաւոր մարդիկ ընտրելով իւրաքանչիւր արհեստէն, և նոյն յանձնեց վաճառանոցի անուանց հսկել, որ անարգած ապրանք իրենց պաշտօնը կատարեն · և եթէ չափոյ և կշռոյ մէջ խարդախողներ և սրշեալ գնէն աւելի ծախողներ գտնեն, յանձնաժողովին անօրէնութեանքն անոնց տուգանքը որոշուի ։ Նմանապէս և պատուէր եղած է որ իւրաքանչիւր արհեստաւոր իւր արհեստին վերաբերեալ վաճառքէն ի պատ ուրիշ ցեղ ապրանք չծախէ · Մենք գոհ եմք այս կարգադրութիւններէն, և առաւել գոհ պիտի լինիմք, եթէ արգիլնաւորուած տեսնեմք Վսեմ. կառավարչին բարեխնամ ջանքերը · արդարացի պատիժը տալով կանոնազանց խանութպաններուն, որոնք լաւ գիտեն խաբել շուկայի տեսչաց տեսութիւնն և սիրտը՝ որ և է կերպիւ ։

— Այս միջոցիս խիստ մեծ գործունէութիւն մի կը տեսնուի սուրբ Յարութեան տաճարի երկաթի նորաշէն գմբէթին նորոգութեան վերայ ։ Արդէն երկաթ շղթայանները (չէնմէր) զետեղուած են, և կը մնայ անոնց վերայ ամրցնել երկաթեղէն տախտակները և տալ արճճով պատել · կը յուսացուի որ մէկ ամսէն բոլորովին կը լըմննայ ։ Նորաշէն գմբէթը նախկինին բարձրութենէն խիստ աւելի բարձր ու հոյակապ գերք մի պիտի ունենայ ։

— Կը փութամք նաեւ ուրախութեամբ աւետել, որ ինչպէս արդէն գրած եմք Յոպպէի ճամբուն շինութեան խը, մեծ գործունէութեամբ կը շարունակուի, և սուրբ քաղաքէս լակրանելով մինչեւ ի կիրճը՝ որ Լերանց գօտիներու մէջէն կ'անցնի և բառ մեծի մասին քարամշակել են, անընդհատ աշխատութեամբ կը բանուին, ի բաքանչիւր մասը իւր մասնակից գիւղից բնակչաց յանձնելով ։ Այս օրինակ երաղութեամբ տարակոյս չկայ, որ երկու ամիս չանցած՝ ամբողջ կը լմննայ ։ Արդէն ճամբորդներուն ուղեւորու-

digitised by A.R.A.R.@